



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ**

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ

ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ք.Երևան

15.11.2017թ.

Ներածություն

Սույն հայեցակարգով ներկայացվում են ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնությունից տուժած անձանց պաշտպանության ոլորտում ՀՀ գործող օրենսդրության բարեփոխման նպատակը, հիմնական ուղղությունները, սկզբունքները, հիմնական խնդիրների վերաբերյալ տեսակետների համակարգը, ակնկալվող արդյունքը:

Խնդրի արդիականությունը

Ընտանիքում բռնության դրսևորումները ցանկացած հասարակության համերաշխության և կայունության ապահովման տեսանկյունից մտահոգիչ երևույթ են: Այս առումով Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ՝

հատկապես հաշվի առնելով հայ հասարակության արժեհամակարգում և սոցիալական կառուցվածքում ընտանիքի ինստիտուտի առանցքային նշանակությունը և ընտանեկան ավանդույթների մեծ դերն ընտանեկան հարաբերությունների կարգավորման գործում:

Ընտանիքում բռնությունը՝ որպես սոցիալական երևույթ, բավականին բազմաշերտ է և ընդգրկում է տարբեր սոցիալական և միջանձնային հարաբերություններ և դրանիցից բխող բռնության տարատեսակներ՝ կնոջ նկատմամբ ամուսնու կողմից գործադրված բռնություն, ամուսնու նկատմամբ կնոջ կողմից գործադրված բռնություն, ծնողների կողմից երեխաների նկատմամբ գործադրված բռնություն, երեխաների կողմից ծնողների կամ ընտանիքի այլ անդամների նկատմամբ բռնություն, ինչպես նաև երեխաների բնականոն զարգացման, ծնողների կողմից դաստիարակության և խնամքի, երեխայի այլ շահերի խախտումներ և այլն:

Հայաստանի Հանրապետությունում ընտանիքում բռնությունը՝ որպես սոցիալական հիմնախնդիր հարաբերականորեն նոր երևույթ է և տակավին վերջերս է սկսել ենթարկվել բազմադիսցիպլինար համալիր վերլուծության՝ սոցիոլոգիական, իրավական, հոգեբանական, միջազգային և այլն:

Հայաստանում խնդրի արդիականության վրա ազդեցություն են ունեցել ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական Միության և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրությունները, զեկույցները, ներկայացված առաջարկները:

Հայաստանի Հանրապետությունում ընտանիքում բռնության դեպքերի թվի համակազմի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կողմից հրապարակված՝ Հանրապետությունում տարեկան կտրվածքով հանցագործությունների թվի (ըստ հանցակազմերի տեսակների)

վերաբերյալ վիճակագրական տվյալներից: Վերջիններիս ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտանիքում կատարված բռնությունները յուրաքանչյուր տարի կազմում են բռնությամբ զուգորդված հանցագործությունների շուրջ 9 տոկոսը (բռնություններից տուժած անչափահասների թիվը չի գերազանցում նույնիսկ 1 տոկոսը):

Այն փաստարկը, որ ընտանիքում բռնությունների վիճակագրությունն ամբողջ պատկերը չի արտացոլում թաքնված (լատենտ) լինելու պատճառով, չի կարող ազդել ընդհանուր պատկերի վրա այնքանով, որքանով բռնությունների շատ դրսևորումներ (բռնություն դեռահասների շրջանում, աշխատավայրերում, քրեակատարողական հիմնարկներում և այլն) նույնպես թաքնված են:

Սա ցույց է տալիս, որ ընտանիքում բռնությունները Հայաստանի Հանրապետությունում չեն հատել հանցավորության թվակազմի միջին վիճակագրական շեմը, և այդ առումով իրավասու պետական կառույցները տիրապետում են իրավիճակին:

Ինչպես վերը նշվել է, ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական Միության և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների զեկույցների և նախաձեռնությունների հիման վրա պետության քաղաքականության մեջ, այդ թվում օրենսդրական մակարդակում առաջացել է ցանկություն ընտանիքում բռնության դեմ առավել արդյունավետ պայքար մղելու համար:

Նշված հիմնահարցերին նվիրված գործող իրավակարգավորումներն ունեն բարելավման կարիք՝ քննարկվող երևույթի դեմ առավել համակարգված պայքար մղելու և օրինական շահերը լավագույնս պաշտպանելու համար:

Նպատակները

Սույն Հայեցակարգի նպատակն է սահմանել իրավական հիմքեր և կառուցակարգեր գործող օրենսդրական ակտերում համաապատասխան փոփոխություններ և(կամ) լրացումներ կատարելու համար, որոնք ուղղված կլինեն

ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության հետևանքով տուժած անձանց իրավունքների պաշտպանության կառուցակարգերի բարեփոխմանն ու, անհրաժեշտության դեպքում, նոր մեխանիզմների սահմանմանը, որոնք՝

1. կընդգծեն պետության թիրախային սահմանադրական պարտավորությունը պաշտպանել և ամրապնդել ընտանիքը՝ որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ հռչակված՝ հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրության հիմք.

2. ընտանիքում բռնության կանխարգելման և բռնությունից տուժած անձանց պաշտպանության ոլորտում պետության քաղաքականությունը կդարձնեն առավել հստակ, բազմակողմանի և արդյունավետ.

3. կբարձրացնեն հանրության իրավական և սոցիալական գիտակցության, ընտանեկան հարաբերություններում բարեվարքության մակարդակը՝ ձևավորելով ընտանիքում բռնության նկատմամբ հասարակական անհանդուրժողականության մթնոլորտ և սոցիալական միջավայր, ինչպես նաև ամրապնդելով ընտանեկան համերաշխությունը:

Խնդիրները

Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնությունից տուժած անձանց պաշտպանության ոլորտում գործող իրավակարգավորումները չունեն համակարգային բնույթ:

Համապատասխան իրավասու մարմինների գործառության ղեկավարող կարիք ունի համալրվելու նոր գործիքակազմով և դրանից բխող լիազորություններով:

Խնդիրներ կան ընտանիքում բռնության ենթարկված անձանց՝ արդարադատության մատչելիության, ընտանիքում բռնության անմիջական սպառնալիքի ներքո գտնվողների անվտանգության ապահովման, ընտանիքում բռնությունից տուժած անձանց համակողմանի աջակցության և սոցիալական վերականգնման երաշխիքների, իրավախախտների վարքագծի վրա պետական ազդեցության քրեաիրավական, վարչաիրավական և քաղաքացիաիրավական եղանակների արդյունավետության, սոցիալապես խոցելի ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների և ավանդական ընտանեկան արժեքների քարոզչության հետ կապված: Առկա են նաև որոշակի այլ խնդիրներ:

«Ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը չի բավարարում վերոնշյալ խնդիրների արդյունավետ լուծման չափանիշներին, ավելին՝ պարունակում է բազմաթիվ ռիսկագեն դրույթներ, որոնք ոչ թե կկարգավորեն ոլորտում առկա խնդիրները, այլ կստեղծեն նոր խնդիրներ և կառուցակարգային խուֆեր:

Կարևոր է նաև արձանագրել, որ **խնդրո առարկայի կարգավորման նպատակով առանձին օրենքի ընդունումը նպատակահարմար չէ**, քանզի ընտանիքում բռնության կանխարգելումն ու բռնությունից տուժած անձանց պաշտպանությունը համասեռ ոլորտ չէ, այլ ընդգրկում է իրավունքի տարաբնույթ ճյուղերի և հասարակական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող հարցեր, որոնք նպատակահարմար է կանոնակարգել արդեն գործող համապատասխան պրոֆիլային օրենքներով և դրանց հիման վրա ընդունվելիք ենթաօրենսդրական ակտերով: Միևնույն ժամանակ օրենքի նշված նախագծով առանձնացված

որոշակի հիմնախնդիրներ իրապաշտական են և կարող են կարգավորվել, սակայն այլ միջոցներով:

Սկզբունքները

Հայեցակարգը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

1. ընտանիքի՝ որպես հասարակության բնական և հիմնական բջիջի պաշտպանության.
2. ընտանիքում բռնության ենթարկված անձանց անվտանգության ապահովման և պաշտպանության.
3. մայրության և մանկության պետական հովանավորության և պաշտպանության.
4. երեխայի լավագույն շահի պաշտպանության.
5. իրավահավասարության ապահովման և խտրականության արգելքի.
6. մասնավոր և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկությունների անձեռնմխելիության.
7. արդարադատության մատչելիության.
8. պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության:

Առաջարկվող լուծումները

1. Ընտանիքում բռնության դեմ պայքարի իրավական կառուցակարգերի բարեփոխման համար խիստ կարևոր է այդ կառուցակարգերի ներգործության սուբյեկտների հստակ սահմանումը, այլ կերպ ասած՝ հնարավոր իրավախախտների և տուժողների սուբյեկտային շրջանակի հստակեցումը: Սույն

առումով «Ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանված անձանց շրջանակն ընդունելի է և կարող է կիրառվել՝ այն տարբերությամբ, որ առանց ամուսնության պետական գրանցման՝ համակեցության պարագայում անձինք կարող են համարվել ընտանիքի անդամներ միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքերում՝ համաձայն Հայեցակարգի հավելվածի:

Ընտանիքի անդամների շրջանակը կարող է որպես լրացում սահմանվել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև համապատասխան իրավախախտումների մասով՝ առանձին սահմանվել ՀՀ քրեական և վարչական իրավախախտումների մասին օրենսգրքերով:

2. «Ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծով իրավակարգավորումների թիրախային հասցեականության ապահովման նպատակով փորձ է արվել առանձնացնել ընտանիքում բռնության տարատեսակները՝ դրանց տալով համապատասխան սահմանումներ: Այսպես՝ նախատեսվում են ֆիզիկական, սեռական, տնտեսական և հոգեբանական բռնությունները՝ համապատասխան իրավական բանաձևումներով:

Բռնության առաջին երկու տարատեսակի մասով նոր սահմանումների կարիք չկա, քանզի բռնության նշված տարատեսակները մանրամասն կանոնակարգված են ՀՀ քրեական օրենսգրքով՝ համապատասխան հանցակազմերի տեսքով:

Միևնույն ժամանակ նպատակահարմար է վերանայել բռնության նշված տարատեսակների համար սահմանված պատժատեսակներն ու պատժաչափերը, ինչպես նաև որոշակի դեպքերում՝ նաև քրեական պատասխանատվության ենթարկելու կառուցակարգերը՝ համաձայն Հայեցակարգի հավելվածի: Հատկանշական է, որ ֆիզիկական բռնության որոշ դրսևորումների դեպքում, գործում է մասնավոր մեղադրանքի սկզբունքը, այսինքն՝ քրեական հետապնդման համար անհրաժեշտ է տուժողի բողոքը: Այս տեսակետից,

առաջարկվում է երկրորդ կամ ավելի անգամ ընտանիքի անդամի նկատմամբ նման բռնություն գործադրելու դեպքում, քրեական հետապնդումն իրականացնել հանրային մեղադրանքի սկզբունքով, ինչը կարող է արդյունավետ կանխարգելիչ միջոց հանդիսանալ:

3. Տնտեսական և հոգեբանական բռնության սահմանումները տրված են խիստ ընդհանրական և իրավակիրառող մարմիններին գնահատողական ընդարձակ լիազորություններ են տալիս: Բացի այդ, հոգեբանական բռնության սահմանման այն մասը, որը վերաբերում է հոգեբանական ուժեղ տառապանք պատճառելուն, քրեականացված է ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով:

Նպատակահարմար է վերանայել նշված սահմանումները և դրանք առավելագույնս որոշակիացնել՝ կոնկրետացնելով արարքի օբյեկտիվ կողմը՝ անհրաժեշտության դեպքում որպես իրավախախտման կազմի պարտադիր հատկանիշ սահմանելով որոշակի բացասական հետևանքների վրա հասնելը՝ համաձայն Հայեցակարգի հավելվածի:

Նպատակահարմար է նաև տնտեսական և հոգեբանական բռնությունների տարբեր դրսևորումները տարանջատել առանձին իրավախախտումների տեսքով՝ կախված դրանց հանրային վտանգավորության աստիճանից և (կամ) կրկնակիությունից՝ ընդգրկելով կա՛մ ՀՀ քրեական օրենսգրքում, կա՛մ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում՝ համաչափ սանկցիաներով՝ համաձայն Հայեցակարգի հավելվածի:

4. Հաշվի առնելով, որ տնտեսական և հոգեբանական բռնության դրսևորումները կարող են հանգեցնել քրեաիրավական կամ վարչաիրավական անբարենպաստ հետևանքների՝ անհրաժեշտ է տարանջատել նաև իրավախախտման բնույթով պայմանավորված՝ կիրառման ենթակա ընթացակարգերը և պատասխանատվության միջոցները:

5. Ընտանիքում բռնության վարքագծի դեպքում կարևոր է նաև քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցների սահմանումը, ինչը բխում է թե՛ ընտանիքում բռնության ենթարկված անձանց մասնավոր շահից և թե՛ իրավախախտին իրավական պատասխանատվության ենթարկելու հանրային

շահից: Մասնավորապես, նպատակահարմար է վերանայել ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ ալիմենտային պարտավորությունների վերաբերյալ նորմերը և սահմանել ընտանիքի անդամի կողմից բռնության համապատասխան տարատեսակների ենթարկվելու դեպքում տուժողի պահանջով իրավախախտից ալիմենտի բռնագանձման սովորականից բարձր չափեր՝ համաձայն Հայեցակարգի հավելվածի:

6. Քաղաքացիաիրավական պատասխանատվության արդյունավետության համար կարևոր է համարժեք դատավարական միջոցների սահմանումը՝ ապահովելու համար բռնությունից տուժած անձանց համար արդարադատության մատչելիության սկզբունքի պատշաճ իրացումը: Մասնավորապես, նպատակահարմար է փոփոխել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումները և սահմանել դատարանի կողմից ալիմենտի բռնագանձման, երեխաների խնամքի և տեսակցության, ինչպես նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքից բխող հայցերի քննության և լուծման արագացված կարգ՝ համաձայն Հայեցակարգի հավելվածի:

7. Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը ներառում է ոչ միայն իրավախախտին իրավական պատասխանատվության կանչելը, այլև տուժողի տարաբնույթ իրավունքների և օրինական շահերի ապահովումը:

Խոսքը, մասնավորապես վերաբերում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքին համապատասխան գործող աջակցության կենտրոնների կողմից ընտանիքում բռնությունից տուժած անձանց բժշկական, հոգեբանական, իրավական, սոցիալական և այլ տիպի աջակցության ցուցաբերմանը:

Նպատակահարմար է ընտանիքում բռնության ենթարկված անձանց սոցիալական ծառայությունների տրամադրման մասով կիրառել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի դրույթները՝ ընտանիքում բռնության կանխարգելման և բռնության զոհերի պաշտպանության ոլորտում:

Կարևոր խնդիր է նաև ընտանիքում բռնության հետևանքով տուժած անձի կեցության հարցը, երբ նա սեփականության իրավունքով իրեն պատկանող

բնակարան չունի, իսկ իր նախկին բնակության վայրում օբյեկտիվ հանգամանքներում չի կարող մնալ: Գործող «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը սահմանում է կացարանով ապահովելու հիմքերը: «Ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվել է ապաստարանների ստեղծման հիմքերը առանց լուծելու համանման կացարանների ճակատագրի հարցը:

Այս տեսակետից կարծում ենք, որ ապաստարանները պետք է հիմնադրվեն և ֆինանսավորվեն պետության կամ համապատասխան համայնքի կողմից, ապաստարանների սոցիալ-կենցաղային պայմանները, ապաստանման հիմքերը, կարգը և առավելագույն ժամկետները, ապաստարանից դուրս գրելու կարգը, ապաստանված անձանց տրամադրվող աջակցության տեսակներն ու կարգը, ապաստարանների աշխատակազմին ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն «Սոցիալական աջակցության» մասին օրենքով, ինչպես նաև նշված օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերում՝ ՀՀ կառավարության որոշմամբ:

Ապաստարանների պետական կամ համայնքային պատկանելիությունը լրացուցիչ երաշխիք կլինի չարաշահումների կանխարգելման համար: Ապաստարանի կառավարման մարմինների կազմում անպայման պետք է նախատեսել՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, փաստաբանների պալատի, եկեղեցու և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից ձևավորվող խորհուրդ:

Կարելի է ապաստարանների կառավարումը հանձնել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ոչ առևտրային կազմակերպությունների:

Նշված իրավակարգավորումները պետք է ելնեն ապաստարաններում տեղավորվելու **կամավորության և ապաստարանների բաց լինելու սկզբունքներից** և կիրառվեն այլ հարազատների՝ ընտանիքում տուժողների կեցության հարցը հոգալուց հրաժարվելու պարագայում: Ընդ որում, պետք է

արգելվի երեխաներին առանց ծնողներից մեկի ապաստարան տանելու հնարավորությունը:

Հարկավոր է օրենքով սահմանել ապաստարանի նպատակները, որոնց թվում պետք է շեշտադրել՝ **ընտանիքի անդամների միավորման (ընտանիքի վերականգնման) նպատակը:**

8. Ընտանիքում բռնության կանխարգելման համար էական նշանակություն ունի իրավագիտակցության բարձրացումը, ընտանիքում հանրային տեղեկատվական միջոցներով համերաշխության քարոզչության իրականացումը:

Նպատակահարմար է ՀՀ կառավարության որոշմամբ կամ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով սահմանել բարձրագույն ուսումնական հաստատություններում ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանության, ընտանիքում բարեվարքության, հայ ազգային ընտանիքի ավանդական հիմքերի, ավանդական ամուսնական կյանքի հոգեբանության և նմանատիպ այլ թեմանով ուսումնական առարկաների կամ դասերի ցանկ, որոնք պետք է դասավանդվեն, ինչպես նաև կանոնակարգել դասավանդող ուսուցիչների և դասախոսների որակավորմանը վերաբերող պահանջները:

Նպատակահարմար է նաև համապատասխան օրենսդրական կարգավորումներով արգելել հեռուստատեսությամբ բռնություն քարոզող կամ ակնհայտորեն բռնությամբ զուգորդված կինոնկարների և հաղորդումների ցուցադրությունը:

9. Անհրաժեշտ է բացառել ընտանիքի նյութական վիճակով պայմանավորված երեխաներին ծնողներից հարկադրաբար վերցնելու և այլ կառույցներին հանձնելու հնարավորությունը: Եթե ընտանիքը գտնվում է նյութական ծանր վիճակում, ապա պետության համար առավել նպատակահարմար է օգնել ընտանիքին, քանի որ երեխան կշարունակի մնալ իր ծնողների հետ և դա պետության համար ծախսի տեսանկյունից առավել մատչելի կարժենա, քան երեխային տեղավորել ապաստարանում և կատարել լրացուցիչ

ծախսեր երեխային պահելու (այդ թվում՝ օժանդակ աշխատակազմին վարձատրելու) համար:

Ակնկալվող արդյունքը

Առաջարկվող փոփոխություններով ակնկալվում է կատարելագործել ընտանիքում բռնության կանխարգելման կազմակերպարավական հիմքերը, ամրապնդել և պաշտպանել ընտանիքի՝ որպես կարևորագույն սոցիալական ինստիտուտներից մեկի բնականոն գործառման ավանդական հիմքերը, ապահովել ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն ու անվտանգությունը, արդարադատության մատչելիությունը, նրանց տրամադրել անհրաժեշտ հոգեբանական, իրավաբանական, սոցիալական, համապատասխան դեպքերում՝ նաև ժամանակավոր նյութական աջակցություն, կանոնակարգել պետական մարմինների միջև ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում համագործակցությունը և հստակեցնել դրանց գործառույթները:

Առդիր՝ հավելվածը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
Փորձագիտական խմբի համակարգող՝
Գ.Մկրտչյան

**ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ**

ՀԱՎԵԼՎԱԾ

1. ՀՀ ընտանեկան օրենսգրքում և ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացնել հետևյալ դրույթը՝ «*Ծնողի դաստիարակչական այն գործառույթը, որը սահմանափակում է երեխայի իրավունքները և ազատությունները ելնելով երեխայի լավագույն շահից, չի կարող առաջացնել որևէ պատասխանատվություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով ուղղակիորեն նախատեսված դեպքի*»:

2. ՀՀ ընտանեկան օրենսգրքում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

2.1. Լրացնել նոր գլուխ՝ ընտանիքում բռնության կանխարգելման և բռնությունից տուժած անձանց պաշտպանության մասին, նկարագրելով այն ամբողջ ընթացակարգը, սկսած այն պահից երբ ընտանիքի անդամն ահազանգում է իր կամ այլ անդամի նկատմամբ ապօրինի գործողությունների մասին:

- Նախատեսել ոստիկանության երկու միջամտության ձև՝ նախազգուշացումը և անհետաձգելի միջամտություն: Ընդ որում անհետաձգելի միջամտությունը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ ընտանիքի անդամի նկատմամբ բռնություն է կիրառվել և առկա է ընտանիքի անդամի կյանքի և առողջության ապահովման անհրաժեշտություն: Անհետաձգելի միջամտության դեպքում ոստիկանը կարող է՝ 1) մեկ ամիս ժամկետով ի պահ վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը, 2) ապահովել բռնության ենթարկված անձի տեղափոխումը ենթադրյալ իրավախախտի բնակության վայրից, իսկ եթե բռնության ենթարկված անձը նշված տարածքի սեփականատերն է, ապա կարճաժամկետ վտարել իրավախախտին, 3) եթե բռնությունը կիրառվել է անչափահաս երեխայի նկատմամբ ծնողների կողմից կամ ծնողի կողմից և բացակայում է մյուս ծնողը, ապա հրավիրել խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչն և միջոցներ ձեռնարկել երեխայի մյուս ծնողի կամ հարազատներին գտնելու ուղղությամբ՝ երեխայի խնամքը կարճաժամկետ մյուս ծնողի, իսկ նրա բացակայության դեպքում՝ հարազատին հանձնելու համար:
- Նախատեսել դատարանի կողմից միջամտության ձև՝ պաշտպանական որոշումը: Ընդ որում, դատարանին կարող է դիմել միայն ընտանիքի տուժած անձը կամ նրա համաձայնությամբ պետական իրավասու մարմինը: Եթե տուժող անձն անչափահաս է, ապա դատարանին կարող է դիմել նրա օրինական ներկայացուցիչը: Սահմանել, որ դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով: Ընդ որում, վերադաս ատյաններում պետք է նախատեսվեն բողոքների քննության ավելի կրճատ ժամկետներ:

- Սահմանել, որ «ընտանիք», «ընտանիքի անդամ» և «հարազատ» եզրույթները կիրառվում են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի իմաստով:

2.2. ՀՀ ընտանեկան օրենսգրքի 5-րդ բաժնում կատարել փոփոխություն և երեխաների համար գանձվող ալիմենտի պարագայում սահմանել ալիմենտի ավելի բարձր չափ, եթե ծնողը բռնություն է գործադրել երեխայի նկատմամբ, ինչը հաստատվել է դատական ակտով:

3. **«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում** կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

- Սահմանել ընտանիքի անդամների, այդ թվում՝ հարազատների հասկացությունը: Հարազատների շրջանակը կարելի է որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-1119-րդ հոդվածներով նախատեսված՝ ըստ օրենքի ժառանգների հերթերին համապատասխան: Ընտանիք և ամուսին հասկացությունները սահմանել, հետևյալ կերպ՝
 - **ընտանիք՝** միևնույն բնակության վայրում փաստացի բնակվող անձանց ամուսնական, ազգակցական, խնամիական կապերի վրա հիմնված փոքր սոցիալական խումբ, որի անդամները վարում են ընդհանուր տնտեսություն, ունեն ընդհանուր բյուջե, ընդհանուր շահեր, կապված են փոխօգնության, բարոյական ու իրավական փոխադարձ պատասխանատվության հիմունքներով: Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնությունից տուժած անձանց իմաստով ընտանիքի անդամ են հանդիսանում՝ ամուսինը (այդ թվում՝ նախկին ամուսինը), ծնողը (մայր կամ հայր)՝ այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը,

խնամատար ծնողը, երեխան (նաև՝ որդեգրված, խորթ, հոգեգավակ), տատը, պապը, քույրը և եղբայրը, որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու (այդ թվում՝ նախկին ամուսնու) ծնողները և քույրը և եղբայրը, վերջիններիս համար՝ փեսան և հարսը:

- **ամուսին՝** քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ամուսնությունը գրանցած տղամարդն ու կինը, ինչպես նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող տղամարդն ու կինը, ովքեր ոչ պակաս, քան մեկ տարի բնակվում են համատեղ կամ ունեն ընդհանուր երեխա կամ բնակվում են համատեղ, և կինը հղի է:
- Սահմանել ապաստարանների կարգավիճակը և առանձնահատկությունները, մասնավորապես՝ ապաստարանները պետք է հիմնադրվեն և ֆինանսավորվեն պետության կամ համապատասխան համայնքի կողմից (կարելի է ապաստարանների կառավարումը հանձնել ոչ առևտրային կազմակերպությունների), ապաստարանների սոցիալ-կենցաղային պայմանները, ապաստանման հիմքերը, կարգը և առավելագույն ժամկետները, ապաստարանից դուրս գրելու կարգը, ապաստանված անձանց տրամադրվող աջակցության տեսակներն ու կարգը, ապաստարանների աշխատակազմին ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն սույն օրենքով, ինչպես նաև նշված օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում՝ ՀՀ կառավարության որոշմամբ: Ապաստարանի կառավարման մարմինների կազմում նախատեսել՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, փաստաբանների պալատի, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից ձևավորվող խորհուրդ: Կարելի է

ապաստարանների կառավարումը հանձնել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ոչ առևտրային կազմակերպությունների: Նշված իրավակարգավորումները պետք է ելնեն ապաստարաններում տեղավորվելու **կամավորության** և **ապաստարանների բաց լինելու սկզբունքներից** և կիրառվեն այլ հարազատների՝ ընտանիքում բռնության զոհերի կեցության հարցը հոգալուց հրաժարվելու պարագայում: Ընդ որում, պետք է արգելվի երեխաներին առանց ծնողներից մեկի ապաստարան տանելու հնարավորությունը:

- Սահմանել ապաստարանի նպատակները, որոնց թվում պետք է շեշտադրել՝ **ընտանիքի անդամների միավորման (ընտանիքի վերականգնման) նպատակը:**
- Սահմանել, որ ապաստարան են տեղափոխվում ընտանիքում բռնության ենթարկված այն անձինք, ովքեր չունեն կեցության վայր կամ վախենում են մնալ կեցության նախկին վայրում, և ովքեր չունեն հարազատներ, կամ վերջիններս գրավոր կերպով մերժել են հոգալ այդ անձանց կեցության հարցը, և այդ անձինք գրավոր համաձայնություն են տվել ապաստարան տեղափոխվելու վերաբերյալ:
- Ապաստարաններում մնալու առավելագույն ժամկետը պետք է սահմանվի մեկ տարին: Ապաստարանների աշխատակիցներ չեն կարող լինել նախկինում դատապարտված անձինք, կամ ընտանիքում բռնություն կատարած անձինք: Ապաստարանները բաց են հասարակական հսկողության համար:
- Սահմանել, որ արգելվում է ընտանիքի նյութական վիճակով պայմանավորված երեխաներին ծնողներից հարկադրաբար վերցնել և այլ կառույցներին հանձնել:

4. **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով** սահմանել ընտանեկան վեճերից բխող գործի քննության և լուծման հստակ ժամկետներ՝

գործը վարույթ ընդունելու օրվանից ոչ ավելի, քան երկու ամիս: Կրճատ ժամկետներ սահմանել նաև վերաքննիչ և վճռաբեկ ատյանների համար:

5. **«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում** փոփոխություն կատարել և արգելել հեռուստատեսությամբ ընտանիքում բռնություն և հանցավոր վարքագիծ քարոզող կամ դրանց հետ զուգորդված կինոնկարների և հաղորդումների ցուցադրությունը: Սահմանել, որ սույն պահանջը խախտող հեռուստաընկերություններին երկու անգամ նախազգուշացնելուց հետո զրկելու են լիցենզիայից:

6. **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի** 183-րդ հոդվածում փոփոխություն կատարել, մասնավորապես՝ նույն հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կարգից շեղումներ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն հոդվածի 4-րդ մասով:», ինչպես նաև նույն հոդվածը լրացնել 4-րդ մասով, հետևյալ խմբագրությամբ՝ «4. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով, 117-րդ հոդվածով և 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը համարվում են հանրային հետապնդման գործեր, եթե այդ հոդվածներով նախատեսված արարքը անձը կատարել է իր ընտանիքի անդամ հանդիսացող նույն տուժողի նկատմամբ երկրորդ կամ ավելի անգամ: Սույն օրենսգրքի իմաստով ընտանիքի անդամ է հանդիսանում «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նշված անձը:»:

7. **ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը** լրացնել նոր հոդվածներով, որոնցով զանցանքներ համարել՝

- *Տնտեսական զրկանքը՝ ընտանիքի անդամի կողմից ընտանիքի մյուս անդամին դիտավորությամբ բնականության վայրից, սննդից, աշխատավարձից, հագուստից կամ անձի կենսագործունեության համար անհրաժեշտ այլ նյութական միջոցներից տրևական կամ պարբերաբար զրկելը, որոնց նկատմամբ անձն ունի օրենքով սահմանված՝ տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունք՝ անձին որոշակի գործողությունների կատարմանը կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու, հասցնելու կամ հակելու կամ անձի պատիվն ու արժանապատվությունը ոտնահարելու նպատակով:*
- *Ընտանիքի անդամի կողմից ընտանիքի մյուս անդամի աշխատելու իրավունքն ապօրինաբար սահմանափակելը կամ օրենքով նախատեսված այլ աղբյուրներից նյութական միջոցներ ստանալն արգելելը՝ օրենքով սահմանված տարիքի հասած անձին օրինական աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելն արգելելը, խոչընդոտելը կամ աշխատանքային պայմանագիրը լուծելուն հարկադրելը կամ օրինական այլ աղբյուրներից նյութական միջոցներ ստանալն արգելելը՝ անձին որոշակի գործողություններ կատարելուն կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրելու, հասցնելու կամ հակելու կամ անձի պատիվն ու արժանապատվությունը ոտնահարելու նպատակով:*
- *Ընտանիքի անդամի կողմից դիտավորությամբ շարունակաբար սպառնալից գործողություններ կատարելը ընտանիքի մյուս անդամի նկատմամբ, որոնք անձի մոտ վախ են հարուցում սեփական անվտանգության համար:*
- *Ընտանիքի անդամի կողմից սպառնալու, վախեցնելու, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշում գործադրելու միջոցով անձի սոցիալական ծայրահեղ մեկուսացումը կամ ինքնուրույն այլ անձանց հետ շփումներ ունենալու հնարավորությունից զրկումը:*

- Դատարանի՝ պաշտպանական որոշման պահանջները չկատարելը:
- Ապաստարանի գործադիր մարմնի ղեկավարի կամ կառավարող կազմակերպության ղեկավարի կողմից ապաստարանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները ժամանակին և ամբողջ ծավալով չհրապարակելը, ինչպես նաև ապաստարանի գործունեության հետ կապված օրենքով չարգելված տեղեկությունները իրավասու մարմիններին, հասարակական հսկողություն իրականացնող սուբյեկտներին կամ փաստաբաններին նրանց պահանջով չփրամադրելը:

8. **ՀՀ քրեական օրենսգիրքը** լրացնել նոր հոդվածներով, որոնցով հանցագործություններ համարել՝

- Վարչական պատասխանատվության ենթարկելուց հետո մեկ տարվա ընթացքում վերոհիշյալ (7-րդ կետում նշված) արարքները կրկին անգամ կատարելը:
- Ապաստարանի աշխատակցի կողմից ապաստարանում բնակվող անձի նկատմամբ դաժան վերաբերմունքը կամ որևէ տեսակի բռնությունը:
- Ապաստարանի աշխատակցի կողմից ապաստարանում բնակվող անձի իրավունքները և ազատությունները, այդ թվում՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակելը:
- Առանց ծնողի ուղեկցության ապաստարանում անչափահաս երեխային պահելը, բացառությամբ երբ երեխան ծնողազուրկ է կամ մնացել է առանց խնամքի և հնարավոր չէ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հարազատներին հանձնել երեխայի խնամքը:

- Ոստիկանության աշխատակցի կամ պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնի աշխատակցի կողմից անօրինական կամ ակնհայտ անհիմն հիմքով ընտանիքի անդամի՝ որպես բռնություն կիրառողի, նկատմամբ սահմանափակումներ կիրառելը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
Փորձագիտական խմբի համակարգող՝
Գ.Մկրտչյան